

<p>Համարը N 1158-Ն Տիպը Որոշում Սկզբնաղբյուրը ՀՀ ՊՏ 2008.10.29/64(654) Հոդ. 1100 Ընդունող մարմինը ՀՀ կառավարություն Ստորագրող մարմինը ՀՀ վարչապետ Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 08.11.2008</p>	<p>Տեսակը Ինկորպորացիա Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 18.09.2008 Ստորագրման ամսաթիվը 20.10.2008 Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը</p>
---	---

Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՅՈՒԹՅՈՒ ՑԱՆԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 սեպտեմբերի 2008 թվականի N 1158-Ն

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ, ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՐՏԱԴԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՆԹԱԿԱ ՓԱՍՏԱԹՅՈՒԹՅՈՒ ՑԱՆԿԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ԿԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԶԵՎԵՐՆ ՈՒ ՆԿԱՐԱԳՐԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Վերնագիրը խմբ. 18.03.11 N 269-Ն)

Համաձայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝
 - 1) վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու և վարորդական վկայական տալու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) վարորդական վկայական ստանալու համար պարտադիր ներկայացման ենթակա փաստաթղթերի ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.
 - 3) ազգային վարորդական վկայականի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 3 հավելվածի.
 - 4) միջազգային վարորդական վկայականի ձևը և նկարագիրը՝ համաձայն N 4 հավելվածի: (1-ին կետը լրաց. 18.03.11 N 269-Ն)
2. Մինչև Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության (այսուհետ՝ Ճանապարհային ոստիկանություն) համապատասխան ստորաբաժանումները
 - 1) որակավորման տեսական քննությունների անցկացման համար նախատեսված տեխնիկական միջոցներով կահավորված քննասենյակներով ապահովելը՝ որակավորման տեսական քննություններն անցկացվում են գրավոր՝ Ճանապարհային ոստիկանության կողմից հաստատված հարցաթերթիկների միջոցով, որոնցում ընդգրկվում են սույն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 22-րդ կետով նախատեսված հարցեր.
 - 2) որակավորման գործնական քննությունների ընդունման համար նախատեսված (կահավորված)՝
 - ա. ավտոդրոմներով (ավտոհրապարակներով) ապահովելը՝ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված գործնական քննության առաջին փուլը չի անցկացվում,
 - բ. քննական տրանսպորտային միջոցներով ապահովելը՝ «A», «B» և «C» կարգերի ու «A1», «B1» և «C1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու գործնական քննությունները կարող են անցկացվել վարորդի թեկնածուի կամ սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված կարգի 37.1-ին կետով նախատեսված ներկայացուցչի՝ մեխանիկական փոխհաղորդակով (տրանսմիսիայով) տրանսպորտային միջոցով, իսկ օրենքով նախատեսված մյուս կարգերի ու ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու գործնական քննությունները՝ տրանսպորտային միջոցներ վարելու ուսուցման գործունեություն իրականացնող կազմակերպությունների ուսումնական տրանսպորտային միջոցներով՝ վերջիններիս համաձայնությամբ:
- (2-րդ կետը խմբ. 14.04.11 N 424-Ն)
3. Սույն որոշմամբ սահմանված կարգի 54-րդ, 59-րդ և 62-րդ կետերը՝ վարորդական վկայականների պատրաստման համար սահմանված ժամկետներում ուժի մեջ են մտնում Ճանապարհային ոստիկանության համապատասխան ստորաբաժանումներին վարորդական վկայական պատրաստելու համար նախատեսված սարքավորումներով ապահովելուց հետո:
4. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետին՝
 - 1) որակավորման տեսական քննությունների անցկացման տեխնիկական միջոցներով կահավորված քննասենյակներով և գործնական քննությունների անցկացման տրանսպորտային և տեխնիկական միջոցներով ապահովել՝
 - ա. Երևան քաղաքի մեկ ստորաբաժանում՝ մինչև 2012 թվականի դեկտեմբերի 31-ը,
 - բ. Երևան քաղաքի մյուս ստորաբաժանումները և մարզային ստորաբաժանումները՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել վարորդական վկայական (ազգային և միջազգային) ստանալու, վարորդական վկայականը փոխանակելու, կորցրած վարորդական վկայականի կրկնօրինակն ստանալու համար անձի կողմից քննական մարմին ներկայացվող դիմումների, ժամանակավոր վարորդական վկայականի, տեսական քննության արդյունքների վերաբերյալ փաստաթղթի, քննությունների արդյունքների հաշվառման մատյանի, ազգային և միջազգային վարորդական վկայականներ տալու մատյանների ձևերը, դրանց լրացման ու պահպանման կարգը, ինչպես նաև վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունող և վարորդական վկայական տվող ստորաբաժանումների քանակն ու տեղակայման վայրերը:

3) *(3-րդ կետն ուժը կորցրել է 18.03.11 N 269-Ն)*
(4-րդ կետը խմբ., փոփ. 18.03.11 N 269-Ն)

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Սարգսյան

2008 թ. հոկտեմբերի 20
Երևան

**Հավելված N 1
ՀՀ կառավարության 2008 թվականի
սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշման**

Կ Ա Ր Գ

ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՏԱԼՈՒ

I. ԸՆԴՈՒՆՈՒ ԴՐՈՒԹՅՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են վարորդական վկայական ստանալու քննություններ ընդունելու, ինչպես նաև տրանսպորտային միջոց վարելու իրավունքի ազգային վարորդական վկայականի (այսուհետև՝ վարորդական վկայական) տալու և դրա հիման վրա միջազգային վարորդական վկայական տալու գործընթացները:

2. Սույն կարգի իմաստով քննական մարմիններ են համարվում ճանապարհային ոստիկանության՝ որակավորման քննություններ ընդունող և վարորդական վկայական տվող ստորաբաժանումները:

3. Վարորդական վկայական տրվում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տարիքը լրացած անձանց՝ «A», «B», «C», «D», «BE», «CE», «DE» և «T» կարգերի ու «A1», «B1», «C1», «D1», «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու համար:

(3-րդ կետը խմբ. 18.03.11 N 269-Ն)

4. Վարորդական վկայականը տրվում է քննական մարմնի կողմից՝

1) «A», «B», «C», «D» կարգերի ու «A1», «B1», «C1», «D1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու համար՝ տեսական և գործնական քննությունների արդյունքների հիման վրա:

2) «BE», «CE», «DE» կարգերի ու «C1E», «D1E» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու համար՝ գործնական քննության արդյունքի հիման վրա:

3) «T» կարգի տրանսպորտային միջոց վարելու համար՝ տեսական քննության և այդ կարգի տրանսպորտային միջոց շահագործող կազմակերպությունների կողմից տրված գործնական քննությունը դրական հանձնելու մասին տեղեկանքի հիման վրա: Տեղեկանքի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարը:

(4-րդ կետը խմբ. 18.03.11 N 269-Ն)

5. Ազգային վարորդական վկայականը տրվում է տասը, իսկ միջազգային վարորդական վկայականը՝ մինչև երեք տարի ժամանակով, բայց ոչ ավելի, քան ազգային վարորդական վկայականի գործողության ժամկետից:

(5-րդ կետը փոփ. 14.04.11 N 424-Ն)

II. ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՄՈՒՄ

6. Որակավորման քննություններն ընդունվում են Երևան քաղաքի և մարզային քննական մարմիններում՝ ըստ անձի մշտական կամ ժամանակավոր հաշվառման կամ փաստացի բնակության վայրի:

6.1. Քննական մարմինները կարող են թույլ չտալ անձին մասնակցել վարորդական իրավունքի որակավորման քննություններին, եթե անձը հաշվառված է ճանապարհային ոստիկանությանը՝ հոգեբուժական և նարկոլոգիական բժշկական հաստատությունների կողմից՝ նշված բժշկական հաստատություններում, հաշվառված անձանց մասին տրամադրված ցանկում:

(6.1 կետը լրաց. 14.04.11 N 424-Ն)

6.2. Քննական մարմինները վարորդական վկայական ստանալու (վարորդական վկայականը փոխանակելու կամ կորցրած վկայականի կրկնօրինակն ստանալու) համար դիմած անձի մոտ «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի «ժէ» կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում անձին գրավոր պահանջագրով ուղարկում են պոլիլինիկական բժշկական հաստատություն՝ հայտնաբերված հիմքի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 20-ի «Այն հիվանդությունների ցանկը, որոնց դեպքում արգելվում է վարել տրանսպորտային միջոց, ինչպես նաև ճանապարհատրանսպորտային պատահարներից տուժածներին բժշկական օգնություն ցույց տալու կարգը հաստատելու մասին» N 581-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված ցանկին համապատասխան բժշկական հավատարմագրում իրականացնելու համար:

(6.2 կետը լրաց. 14.04.11 N 424-Ն)

7. Ժամկետային պարտադիր զինվորական ծառայության զորակցված շարքային կազմի զինծառայողները կարող են որակավորման քննությունները հանձնել զորամասի տեղակայման վայրն սպասարկող քննական մարմնում:

8. Որակավորման քննություններն ընդունվում են երկու փուլով՝

1) տեսական քննություն՝ տեսական գիտելիքների ստուգում:

2) գործնական քննություն՝ գործնական վարման հմտության ստուգում:
9. Տեսական քննությունն անցկացվում է համապատասխան ծրագրով ապահովված համակարգչային տեխնիկայով կահավորված հատուկ քննասենյակում՝ քննական մարմնի համար սահմանված բոլոր աշխատանքային օրերին՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի հրամանով սահմանված ժամերին:

(9-րդ կետը խմբ. 18.03.11 N 269-Ն)

10. Տեսական քննությանը մասնակցելու համար անձը քննական մարմին պետք է ներկայացնի Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1158-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված ցանկի (այսուհետև՝ ցանկ) 1-3-րդ և 6-րդ կամ 7-րդ կետերով (եթե 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը ենթակա են ներկայացման) նախատեսված փաստաթղթերը:

(10-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն, լրաց. 14.04.11 N 424-Ն)

11. Տեսական քննությունը դրական չհանձնած անձը կարող է ցանկացած ժամանակ սույն կարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերը ներկայացնելով՝ կրկին մասնակցել տեսական քննությանը:

12. Գործնական քննությունն անցկացվում է շաբաթական առնվազն մեկ անգամ՝ քննական մարմնի կողմից նախապես որոշված օրերին, որի մասին տեսական քննության ավարտից անմիջապես հետո հայտնում են տեսական քննությունը դրական հանձնած անձանց:

13. Գործնական քննությանը մասնակցելու համար անձը քննական մարմին պետք է ներկայացնի ցանկի 2-րդ, 3-4-րդ, 9-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

(13-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն, 14.04.11 N 424-Ն)

14. Որակավորման քննություններն ընդունում են ճանապարհային ոստիկանության պետի կողմից ստեղծված՝ առնվազն երեք անդամից բաղկացած քննական հանձնաժողովները: Հանձնաժողովն իրավագոր է, եթե ներկա են անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի նախագահի բացակայության ժամանակ քննական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ նրա պարտականությունները կատարում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը:

(14-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն, 18.03.11 N 269-Ն)

15. Քննական հանձնաժողովի անդամ կարող է նշանակվել ճանապարհային ոստիկանության այն ծառայողը, որն ունի այն կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական, որոնց համար անցկացվելու է քննությունը (բացառությամբ տրամվայ և տրոլեյբուս վարելու վարորդական իրավունքի վկայականի համար անցկացվող տեսական քննության):

16. Քննական հանձնաժողովների կազմում կարող են ընդգրկվել ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպության մեկական ներկայացուցիչներ (համաձայնությամբ):

17. Հասարակական կազմակերպության ներկայացուցիչ հանդիսացող հանձնաժողովի անդամի չմասնակցելը հանձնաժողովի աշխատանքներին կամ հասարակական կազմակերպության կողմից թեկնածու չառաջադրելը որակավորման քննությունների անցկացմանն արգելք չեն կարող հանդիսանալ:

III. ՏԵՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՄՆԱՆ ԿԱՐԳԸ

18. Տեսական քննություններն անցկացվում են համակարգչային թեստերի միջոցով:

19. Յուրաքանչյուր թեստ բաղկացած է պատասխանի 2-5 տարբերակ պարունակող 10 հարցերից (1 հարց՝ կարգի 22-րդ կետի 1-ին ենթակետից, 7 հարց՝ կարգի 22-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերությունից, 1 հարց՝ կարգի 22-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությունից, 1 հարց՝ կարգի 22-րդ կետի 3-րդ ենթակետից), ընդ որում, պատասխանների տարբերակներից ճիշտ է միայն մեկը:

(19-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն)

20. Նախքան քննական սենյակ մտնելը՝ քննական մարմնի ծառայողն ստուգում է սույն կարգի 10-րդ կետով նախատեսված փաստաթղթերի առկայությունը, իսկ քննությունն սկսելուց առաջ՝ բացատրում քննության անցկացման կարգը:

21. Յուրաքանչյուր թեստի հարցերն ընտրվում են ճանապարհային ոստիկանության կողմից կազմված հարցաշարի տարբեր բաժիններից՝ համակարգչի պատահական ընտրության միջոցով: Հարցաշարը (փոփոխությունների դեպքում՝ նաև փոփոխությունները) կազմելուց հետո այն հրապարակվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության լրատվության միջոցներով (այդ թվում՝ էլեկտրոնային):

22. Հարցաշարը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

1) հարցեր «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքից.

2) հարցեր Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 28-ի «Հայաստանի Հանրապետության ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների և պայմանների ցանկը հաստատելու մասին» N 955-Ն որոշման՝

ա. N 1 հավելվածից,

բ. N 2 հավելվածից.

3) հարցեր երթևեկության մասնակիցների կյանքի անվտանգության և պատահարների դեպքում առաջին օգնության և ինքնօգնության քայլերի վերաբերյալ:

(22-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

23. Թեստի հարցերին պատասխանելու համար տրվում է 15 րոպե ժամանակ, որը լրանալուց հետո թեստի լրացումը դադարեցվում է:

24. Քննության արդյունքները տպագրվում են համակարգչի միջոցով՝ ճիշտ ու սխալ պատասխանների մասին նշումներով և տրվում քննությունը հանձնողին:

25. Քննությունը համարվում է դրական հանձնած, եթե քննություն հանձնողը հարցերի առնվազն 90 տոկոսին տվել է ճիշտ պատասխաններ:

26. Քննության արդյունքների վերաբերյալ կատարվում են գրառումներ քննությունների արդյունքների հաշվառման մատյանում ու հաստատվում հանձնաժողովի նախագահի և անդամների ստորագրությամբ:

27. Քննության ընթացքը ցուցադրվում է սպասարահում տեղադրված էկրանին:

28. Տեսական քննության ավարտից հետո, եթե արդյունքը եղել է դրական, ապա նույն աշխատանքային օրվա ընթացքում անձին տրվում է տեսական քննության արդյունքների վերաբերյալ փաստաթուղթ: Եթե քննության արդյունքը եղել է բացասական, ապա անձին վերադարձվում են համապատասխանաբար ցանկի 6-րդ կամ 7-րդ կետերով (եթե 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են) նախատեսված փաստաթղթերը:

(28-րդ կետը լրաց. 14.04.11 N 424-Ն)

IV. ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

29. Գործնական քննության ժամանակ ստուգվում է վարորդի թեկնածուի գործնական վարման հմտությունն այն կարգերի տրանսպորտային միջոցներով, որոնք վարելու համար տրվելու է վարորդական վկայական, բացառությամբ սույն կարգի 32-րդ կետով սահմանված դեպքերի:

(29-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն)

30. Գործնական քննության անցկացման համար նախատեսված տրանսպորտային միջոցը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուսումնական տրանսպորտային միջոցի համար սահմանված պահանջներին և կահավորված լինի տեսախցիկով:

(30-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն)

31. Ըստ տրանսպորտային միջոցների կարգերի ու ենթակարգերի՝ գործնական քննություններն ընդունվում են հետևյալ տրանսպորտային միջոցներով՝

1) «A1» ենթակարգ՝ երկանիվ թեթև մոտոցիկլով.

2) «A» կարգ՝ երկանիվ մոտոցիկլով՝ բացառությամբ սույն կետի 1-ին ենթակետում նշված մոտոցիկլների.

3) «B1» ենթակարգ՝ տրիցիկլով.

4) «B» կարգ՝ թեթև մարդատար ավտոմոբիլով կամ մինչև 3500 կգ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլով.

5) «C1» ենթակարգ՝ 3500 կգ-ից մինչև 7500 կգ ներառյալ թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլով.

6) «C» կարգ՝ 7500 կգ-ից ավելի թույլատրելի առավելագույն զանգված ունեցող բեռնատար ավտոմոբիլով.

7) «D1» ենթակարգ՝ բացի վարորդի նստատեղից՝ ավելի քան 8, սակայն ոչ ավելի, քան 16 նստատեղ ունեցող ավտոբուսով.

8) «D» կարգ՝ բացի վարորդի նստատեղից՝ ավելի քան 16 նստատեղ ունեցող ավտոբուսով.

9) «BE» կարգ՝ սույն կետի 4-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցի քարշակով շարժակազմով.

10) «C1E» ենթակարգ՝ սույն կետի 5-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցի քարշակով շարժակազմով.

11) «CE» կարգ՝ սույն կետի 6-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցի քարշակով շարժակազմով.

12) «D1E» ենթակարգ՝ սույն կետի 7-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցի քարշակով շարժակազմով.

13) «DE» կարգ՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված տրանսպորտային միջոցի քարշակով շարժակազմով կամ համակցված ավտոբուսով:

(31-րդ կետը խմբ. 18.03.11 N 269-Ն)

32. Միաժամանակ «B» և «C» կարգերի կամ «C» կարգի և «B1» ենթակարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու դեպքում գործնական քննությունն ընդունվում է «C» կարգի տրանսպորտային միջոցով, իսկ միաժամանակ «B» կարգի և «C1» ենթակարգի կամ «B1» և «C1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական վկայական ստանալու դեպքում գործնական քննությունն ընդունվում է «C1» կարգի տրանսպորտային միջոցով:

(32-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն, 18.03.11 N 269-Ն)

33. «T» կարգի տրանսպորտային միջոց վարելու վարորդական վկայական ստանալու գործնական քննությունն անցկացվում է տրոլեյբուս շահագործող կազմակերպությունների կողմից, որի արդյունքների մասին տեղեկանքը ներկայացվում է քննական մարմին:

(33-րդ կետը խմբ. 18.03.11 N 269-Ն)

34. Ավտոմոբիլով քննությունն անցկացվում է 2 փուլով՝

1) առաջին փուլ՝ գործնական վարում ավտոդրոմում կամ ավտոհրապարակում.

2) երկրորդ փուլ՝ գործնական վարում ճանապարհային երթևեկության իրական պայմաններում:

35. Քննության առաջին փուլը տևում է մինչև 10 րոպե, երկրորդ փուլը՝ մինչև 15 րոպե:

(35-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

36. Քննությունը կարող է դադարեցվել մինչև նշված ժամանակը լրանալը, եթե քննությունն հանձնողը՝

1) առաջին փուլում հրաժարվում է կատարել տարրերից որևէ մեկը.

2) երկրորդ փուլում հրաժարվում է կատարել քննություն ընդունողի գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության (ձև N 1) մեջ նշված գործողությունները կատարելու մասին պահանջը կամ խախտում է ճանապարհային երթևեկության բնագավառի օրենսդրությունը:

(36-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

37. Ավտոհրապարակում (ավտոդրոմում) քննությունն ընդունելիս՝ քննություն ընդունողը պետք է գտնվի տրանսպորտային միջոցից դուրս, իսկ ճանապարհային երթևեկության իրական պայմաններում քննություն ընդունելիս՝ տրանսպորտային միջոցի ներսում: Ճանապարհային երթևեկության իրական պայմաններում քննությունն ընդունվում է քննական հանձնաժողովի անդամ հանդիսացող ճանապարհային ոստիկանության մեկ ծառայողի կողմից:

(37-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն)

37.1. Ճանապարհային երթևեկության իրական պայմաններում քննության ընթացքում տրանսպորտային միջոցի ներսում կարող է գտնվել վարորդի թեկնածուի մեկ ներկայացուցիչ՝ առանց քննությանը միջամտելու իրավունքի:

(37.1 կետը լրաց. 14.04.11 N 424-Ն)

38. Գործնական քննության առաջին փուլի անցկացման համար օգտագործվող ավտոհրապարակը (ավտոդրոմը) պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ուսումնական ավտոհրապարակի (ավտոդրոմի) համար սահմանված պահանջներին:

39. Գործնական քննության երկրորդ փուլն անցկացվում է գործնական վարման ուսուցում իրականացնելու համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից սահմանված ճանապարհներին:

(39-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

40. Քննության երկրորդ փուլում երթուղու երկարությունը պետք է կազմի 1,5-4 կմ և պետք է հնարավորություն տա քննություն ընդունողին տալ գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշված գործողությունները կատարելու հանձնարարականներ:

(40-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

41. Վարորդի թեկնածուի գործնական վարման հմտությունն ստուգվում է գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշված գործողությունների կատարման արդյունքներով:

(41-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

42. Քննության առաջին փուլը համարվում է դրական հանձնած, եթե վարորդի թեկնածուի կողմից քննության ընթացքում պահանջվող գործողություններից առնվազն 4-ը կատարվել են ճիշտ:

(42-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

43. Քննության երկրորդ փուլը համարվում է դրական հանձնած, եթե վարորդի թեկնածուի կողմից քննության ընթացքում առանց ճանապարհային երթևեկության բնագավառի օրենսդրության խախտումների են կատարվել քննություն ընդունողի կողմից տրված գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշված գործողություններից առնվազն 7-ը:

(43-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

44. Քննությունը համարվում է դրական հանձնած, եթե վարորդի թեկնածուի կողմից քննության երկու փուլերն էլ հանձնվել են դրական:

(44-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

45. Քննության երկրորդ փուլն ավարտվելուց հետո քննություն ընդունողը վարորդի թեկնածուին տեղեկացնում է քննությունը դրական կամ բացասական հանձնելու մասին:

(45-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

46. Քննության վերջնական արդյունքները հաստատվում են գործնական քննության արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ քննություն ընդունողի ստորագրությամբ:

(46-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

47. «A» կարգի և «A1» ու «B1» ենթակարգերի տրանսպորտային միջոցներ վարելու գործնական քննությունն ընդունվում է ավտոդրոմում կամ ավտոհրապարակում:

(47-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն, խմբ. 18.03.11 N 269-Ն)

48. **(48-րդ կետն ուժը կորցրել է 18.03.11 N 269-Ն)**

49. **(48-րդ կետն ուժը կորցրել է 18.03.11 N 269-Ն)**

50. Ստոդոցիկի վարորդի թեկնածուն պետք է կարողանա՝

1) կատարել ուղղագծային երթևեկություն.

2) անցնել ցածր փոխանցումից բարձրի, և հակառակը.

3) կատարել շրջադարձեր և հետադարձեր՝ առանց ոտքերը ոտնակից վերցնելու.

4) դեկավարել մոտոցիկլը մեկ ձեռքով:

(50-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

51. Ստոդոցիկով քննությունը համարվում է դրական հանձնած, եթե վարորդի թեկնածուն կարողանում է կատարել սույն կարգի 50-րդ կետով նախատեսված բոլոր գործողությունները:

(51-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

V. ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐ ՏԱՆՈՒ ԿԱՐԳԸ

52. Որակավորման քննությունների ընդհանուր արդյունքների հիման վրա քննական մարմնի ղեկավարի կողմից ընդունվում է անձին վարորդական վկայական տալու կամ վարորդական վկայական տալը մերժելու մասին որոշումներից որևէ մեկը՝ համաձայն NN 2 և 3 ձևերի: Տեսական քննությունը բացասական հանձնելու դեպքում վարորդական վկայական տալու մերժման մասին որոշումն ընդունվում է անմիջապես քննության ավարտից հետո, իսկ գործնական քննությունը բացասական հանձնելու դեպքում՝ ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը:

53. Քննական մարմնի ղեկավարի կողմից կայացված վարորդական վկայական տալու մերժման մասին որոշումը ենթակա է բողոքարկման՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

54. Որակավորման քննությունները դրական հանձնած անձը ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան վարորդական վկայական տալու համար հիմք հանդիսացած փաստաթղթերի պահպանման համար սույն կարգի 72-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը, ներկայացնում է ցանկի 5-րդ կետով նախատեսված փաստաթուղթը և անհրաժեշտ տվյալներն անմիջապես գրանցվում են վարորդական վկայականներ տալու մատյանում ու մուտքագրվում համակարգիչ: Դրանից հետո անձն անմիջապես նկարահանվում է համակարգչային տեխնիկայի միջոցով, և նրան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հատկացվում է հերթական համարի վարորդական վկայական:

(54-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

55. Վարորդական վկայականի հետ միասին անձին տրվում է վարորդական վկայական տալու մասին որոշում և վերադարձվում ցանկի 6-րդ կամ 7-րդ կետերով (եթե 6-րդ կամ 7-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են) նախատեսված փաստաթուղթը:

(55-րդ կետը լրաց. 18.02.10 N 148-Ն, լրաց., փոփ. 14.04.11 N 424-Ն)

VI. ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՓՈԽՆԱՆԱԿՄԱՆ, ԿՈՐԱԾ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ԿՐԿՆՕՐԻՆԱԿԸ ՏԱՆՈՒ ԵՎ ՎԱՐԵՆՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԱԾ ԱՆՁՆՆՑ ՎԱՐՈՐԴԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԸ ԿԵՐԱԴԱՐՁՆԵՆՈՒ ԿԱՐԳԸ

56. Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինների կողմից տրված (այդ թվում՝ այլ պետություններում փոխանակված), ինչպես նաև ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից մինչև 1992 թվականի փետրվարի 21-ը տրված վարորդական վկայականը կորցնելու, ինչպես նաև փոխանակման դեպքում դրա տնօրինողին սույն կարգով սահմանված կարգով նույն կարգի տրանսպորտային միջոցներ վարելու վարորդական իրավունքի նոր վկայական է տրվում՝ առանց որակավորման քննություններ հանձնելու:

(56-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

56.1. ԽՍՀՄ պետությունների իրավասու մարմինների կողմից տրված և 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վարորդական վկայականը կորցնելու, ինչպես նաև փոխանակման դեպքում դրա տնօրինողին սույն կարգով սահմանված կարգով առանց որակավորման քննություններ հանձնելու տրվում է՝

1) «շոֆեր-լյուբիտել» (шофер-любитель) կարգի դեպքում՝ «B» կարգի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք.

2) «շոֆեր-պրոֆեսսիոնալ» (шофер-профессионал) կարգի դեպքում՝ «B» և «C» կարգերի տրանսպորտային միջոցներ վարելու իրավունք:

(56.1 կետը լրաց. 18.02.10 N 148-Ն)

57. Վարորդական վկայականի փոխանակման համար անձը քննական մարմին պետք է ներկայացնի ցանկի 1-2-րդ, 5-րդ և 10-րդ, իսկ քննական մարմնի կողմից ոչնչացված վարորդական վկայականի վերականգնման համար՝ ցանկի 1-2-րդ, 5-րդ, կետերով նախատեսված փաստաթղթերը:

(57-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն, 14.04.11 N 424-Ն)

58. Փոխանակման դեպքում հին վարորդական վկայականը՝ դակելու (կտրելու) միջոցով անվավեր ճանաչելուց հետո տնօրինողի ցանկությամբ վերադարձվում է իրեն, բացառությամբ սույն կարգի 65.1-ին կետում նշված դեպքերի, երբ վարորդական վկայականը առանց անվավեր ճանաչելու վերադարձվում է տնօրինողին:

(58-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

59. Վարորդական վկայականի փոխանակման դեպքում տվյալները գրանցվում են վարորդական վկայականներ տալու մատյանում ու մուտքագրվում համակարգիչ, որից հետո անձն անմիջապես նկարահանվում է համակարգչային տեխնիկայի միջոցով, և նրան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հատկացվում է հերթական համարի վարորդական վկայական:

(59-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

60. Կորած վարորդական վկայականի կրկնօրինակն ստանալու համար անձը քննական մարմին է ներկայացնում ցանկի 1-ին, 2-րդ, 5-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ մինչև 2000 թվականի հուլիսի 1-ը տրված վարորդական վկայականների կորստյան դեպքում՝ նաև ցանկի 11-րդ կետով նախատեսված փաստաթուղթը:

(60-րդ կետը լրաց., փոփ. 18.02.10 N 148-Ն, փոփ. 18.03.11 N 269-Ն, 14.04.11 N 424-Ն)

61. Կորած վարորդական վկայականի կրկնօրինակը տալու դեպքում տվյալները գրանցվում են վարորդական վկայականներ տալու մատյանում, այնուհետև տվյալները մուտքագրվում են համակարգիչ, որից հետո անձն անմիջապես նկարահանվում է համակարգչային տեխնիկայի միջոցով, և անձին իր ցանկությամբ տրվում է ժամանակավոր վարորդական վկայական՝ 20 օր ժամանակով:

(61-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

62. Փաստաթղթերը քննական մարմին հանձնելու օրվանից 15 օր անց, եթե քննական մարմնի կողմից կատարված հարցումներով պարզվում է, որ անձը զրկված է տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, կամ նրա վարորդական վկայականը վարչական իրավախախտման փաստի կապակցությամբ չի գտնվում վարույթ իրականացնող մարմնում, նրան մեկ աշխատանքային օրվա ընթացքում հատկացվում է վարորդական վկայական:

(62-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

63. Վարորդական վկայական ստանալիս ժամանակավոր վարորդական վկայականը ենթակա է վերադարձման: Եթե ժամանակավոր վարորդական վկայականը չի վերադարձվում, ապա վարորդական վկայականը տրվում է սույն կարգի 61-րդ և 62-րդ կետերով սահմանված կարգով:

(63-րդ կետը փոփ. 18.02.10 N 148-Ն)

64. Վարորդական վկայականի փոխանակման դեպքում նոր վարորդական վկայականի հետ անձին տրվում է վարորդական վկայականը փոխանակելու մասին որոշում (ձև N 5), իսկ կորցրած վարորդական վկայականի կրկնօրինակը տալու դեպքում՝ կորցրած վարորդական վկայականի կրկնօրինակ տալու մասին որոշում (ձև N 6):

(64-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն, փոփ. 14.04.11 N 424-Ն)

65. Այլ պետություններում ստացած և 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները վկայականի կրկնօրինակ տրվում է սույն կարգով սահմանված կարգով որակավորման քննություններ հանձնելուց հետո: Փոխանակման դեպքում ներկայացվում են ցանկի 1-5-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ կորցրած վկայականների կրկնօրինակներ տալու դեպքում՝ ցանկի 1-4-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

(65-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն, փոփ. 14.04.11 N 424-Ն)

65.1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների անձնակազմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամների՝ 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները փոխանակվում կամ կորցրած վկայականների կրկնօրինակներ տրվում են առանց որակավորման քննություններ հանձնելու: Փոխանակման դեպքում ներկայացվում են ցանկի 1-ին, 2-րդ, 5-րդ և 10-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ կորցրած վկայականների կրկնօրինակներ տալու դեպքում՝ ցանկի 1-ին, 2-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

(65.1 կետը լրաց. 18.02.10 N 148-Ն, փոփ. 14.04.11 N 424-Ն)

65.2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների այլ պետություններում ստացած և 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին համապատասխանող վարորդական վկայականները փոխանակվում կամ կորցրած վկայականների կրկնօրինակներ տրվում են առանց որակավորման քննություններ հանձնելու: Փոխանակման դեպքում ներկայացվում են ցանկի 1-ին, 2-րդ, 5-րդ, 8-րդ և 10-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը, իսկ կորցրած վկայականների կրկնօրինակներ տալու դեպքում՝ ցանկի 1-ին, 2-րդ, 11-րդ և 12-րդ կետերով նախատեսված փաստաթղթերը:

(65.2 կետը լրաց. 18.02.10 N 148-Ն, փոփ. 14.04.11 N 424-Ն)

66. Այլ պետություններում ստացած և 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վարորդական վկայականները չեն փոխանակվում, և կորցրած վարորդական վկայականի կրկնօրինակ չի տրվում:

(66-րդ կետը խմբ. 18.02.10 N 148-Ն)

66.1. Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցչությունների անձնակազմի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի չհանդիսացող անդամների՝ 1968 թվականի նոյեմբերի 8-ի «Ճանապարհային երթևեկության մասին» կոնվենցիայով և դրա հետագա փոփոխություններով ու լրացումներով վարորդական վկայականներին ներկայացվող պահանջներին չհամապատասխանող վարորդական վկայականները փոխանակվում են, կամ կորցրած վկայականների կրկնօրինակներ տրվում են առանց որակավորման քննություններ հանձնելու՝ ելնելով փոխադարձության սկզբունքից՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի

